

ՎԱՐՍԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ¹⁾

Ա. ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Վարակիչ հիւանդութիւնների տարածման մեւը և նոցա
էութիւնը:

Կլիման և տարուայ եղանակը թէև անկասկած ազ-
գեցութիւն ունին զատ հիւանդութիւնների ծագման
վերալ, բայց իսկապէս նոցա անմիջական պատճառը չեն:
Նոքա միայն յարմար պայմաններ են ստեղծում հիւան-
դութեան համար, կամ նորանով, որ նպաստում են հի-
ւանդութեան սերմերի աճման և կենսունակութեան,
կամ թէ նորանով, որ նուազեցնում են մարդկալին
մարմնի հակազդեցութեան ընդունակութիւնը հիւան-
դութեան սերմերի դէմ: Եղանակից և կլիմալից կա-
խումն ունեցող հիւանդութիւններից մեծ մասի գլխա-
ւոր պատճառը շնչաւոր սերմերն են, որոնք ներս մըտ-
նելով մեր մարմնի մէջ՝ վարակում են նորան: Այն բո-
լոր հիւանդութիւնները, որոնք ծագում են այս տեղա-
փոխուող սերմերի, ինչպէս «վարակող նիւթի», մարմնի
մէջ մտնելու շնորհիւ, կոչում են «վարակիչ հիւան-
դութիւններ»:

Մի քանի վարակիչ հիւանդութիւններ, օրինակ
կարմրուկը կամ քութէշը, տարածում են այնպէս, որ
հիւանդութեան սերմը—վարակող նիւթը „Kontagium“

1) Այս յօդուածը թարգմանուած է „Gesund-
heitsbüchlein“ գրքից: Տես «Լումայ» 1896 թ. Բ. Գիրը:

անցնում է մարդուց մարդ։ Ալդ՝ կպչելով վարակող (kontagios) հիւանդութիւնների սերմերը սովորական պայմաններում իրանց աճման պայմանը գտնում են միայն մարդկալին կամ կենդանական մարմնի մէջ։ Ուրեմն վարակիչ հիւանդութիւններ, ինչպէս օրինակ տենդը, այնպիսի վարակիչ նիւթ ունին, որոնք երանց վարակման ընդունակութիւնը գտնում են առաջ մարմնից դուրս և որոնք որոշեալ տեղերն են լինում։ Ալդ հիւանդութիւնների պատճառն առաջ համարում էին թունաւոր հոտերը — „Miasma“ և այդ պատճառով դոքա անուանում էին «միազմատիքական» հիւանդութիւններ։ Բայց գեռ ճիշտ յայտնի չէ, թէ այս «կօնտագիօգ» հիւանդութիւնները միայն մարդուց մարդ են անցնում և թէ՝ երբէք այս տեղի չէ ունենում «միազմատիք» հիւանդութիւնների ժամանակ։ Ըսդհակառակն, թւում է թէ տարածման առաջին տեսակը վարակման ամենասովորական եղանակն է։ Բայց սոցանից կան և այնպիսի հիւանդութիւններ, որոնց սերմն անկասկած թէ մարդուց մարդ են անցնում և թէ աճում են ու բազմանում մարդկալին մարմնից դուրս և որոնք Նորից մարդու վերալ անցնելով՝ կարող են հիւանդութիւն առաջ բերել։ Ալդպիսի հիւանդութիւնները կոչւում են կօնտագիօգ «միազմատիքական» և դոցա են պատկանում ասիական խոլէրան և աղիքների հարինքը։

Հիւանդութեան սերմերը:

Մի շարք վարակիչ հիւանդութիւնների համար լազողուել է արդէն գտնել հիւանդութիւնների սերմերը այն՝ տեսակ տեսակ մանր կենդանի էակների ձևով, որոց մասին արդէն վերը խօսեցինք։ Այս հիւանդութիւններից ամեն մէկ տեսակում արեան, հիւսուածքների, հիւթերի կամ մարմնի բնական արտաթորութիւնների մէջ գտել են միշտ միանման էակներ։ բայց որոնք առանց բացառութեան չեն գտնուել առողջ կամ այլ հիւանդութիւն ունեցող մարդկանց մէջ։ Այս սերմերից մի քանի տեսակները լաջողուել է աճեցնել արհեստապէս պատրաստած սննդարար նիւթերի մէջ, ինչպէս օրինակ ժելատինով (խէժ) թանձրացած արգանա-

կի մէջ և ալս արհեստապէս աճեցրած սերմերը ներմուծելով կենդանիների մէջ առաջացնել ալդ հիւանդութեան յատուկ երկոյթները։ Մի քանի անդամ ապացուցուեցաւ պատահաբար, անզգուշութեամբ կամ փորձով, որ արել են իրանց վերալ արիասիրտ հետազօտողները, որ ալս արհեստապէս աճեցրած սերմերը մարդու մէջ ևս նոյն հիւանդութիւններն առաջացրին։ Այն յաջողութիւնները, որ գիտութիւնը արել է հիւանդութեան սերմերի գիտութեան սահմանում, տեղի են ունեցել վերջին մի քանի տասնեակ տարիներում և սորահամար մենք գլխաւորապէս պարտական ենք Տօրերտ Կօխին։ Երևաց, որ ալս մանր կենդանիների կեանքի պայմանների հիմնական ուսումնասիրութիւնը անչափ կտրւոր է վարակիչ հիւանդութիւնները հասկանալու և նոցա հետ կուտելու համար։

Մինչև ալժմ իբրև հիւանդութեան պատճառ նկարագրած կենդանի էակների մեծ մասը բուսականութեան կարգին են պատկանում, և յատկապէս մանր սունկերի ցեղին։ Որովհետեւ նոցանից շատերը գծի ձև ունին, ուստի և նոցա անուանում են ալդ բառի յունարէն թարգմանութեամբ՝ զակտէրիա։ Նոքա պատահում են երբեմն հատ-հատ, երբեմն խմբով և երբեմն էլ շղթալաձև։ Զեկի կողմից նոցանից ոմանք գծի նման են (լատիներէն Bacillus), ոմանք գնդակաձև են (Coccus), ոմանք կորաձև (Comptabacillus — ստորակէտաձև), միւսները օձաձև են կամ պտուտակաձև (Spirillus), մի քանի տեսակներ շատ կամ քիչ շարժուն են լինում, իսկ միւսներն անշարժ։

Բակտէրիաներն աճում են միջից բաժանուելով. ալս պիսով գոյացած նոր բակտէրիաները հասնելով մալր բակտէրիալի մեծութեան՝ նորից բաժաննում են, և այս գործողութիւնն այնպէս արագ է կատարում, որ փոքր քանակութեամբ բակտէրիաներից մի քանի ժամուալ ընթացքում կարող են միլիարդներ գոյանալ։ Բազմանալու ժամանակ մի քանի տեսակներ տեղական ձև են ստանում (Sporus) այնպէս, որ բակտէրիալից բաժանում է մի, ըստ մեծի մասին գընդակաձև կամ ձուա-

ձեւ մասնիկ, որ մայր բակտէրիալի ոչնչանալու դէպ-քում կենդանի է մնում և աւելի մեծ դիմագրութիւն է առաջ բերում տաքութեան, ցրտի և բակտէրիանե-րին վնասակար շատ նիւթերի դէմ։ Եթէ մի ալդպիսի, ըուսի սերմի նման, մի սպօր ընկնի բարելաջող կեանքի պարմաններում, նորանից դարձեալ բակտէրիա կգոյա-նալ, որ ընդունակ է նորից բազմանալու։ Ալդ է պատ-ճառը, որ ալդ սպօրերի միջոցով հիւանդութեան սեր-մերը, որոնք իսկապէս միայն աճում են մարմնի ներ-սը, կարող են մարմնից դուրս էլ պահպանել իրանց գոյութեան ընդունակութիւնը և նորից բազմանալ, հէնց որ կընկնեն մի ուրիշ մարմնի մէջ։

Բոլոր բակտէրիաներն այնքան մանր են, որ նոցա կարելի է տեսնել միայն չափազանց մեծացնելուց լե-տոյ։ Դրեթէ բոլորը համարեա գոյն չունին։ Բայց գըլ-խաւորապէս նորանով են միմեանցից տարբերում, որ հեշտութեամբ ընդունում են որոշեալ ներկի նիւթերը և իւրացնում։ Այս պատճառով եթէ ալդ տեսակ ներ-կերով ներկենք մարմնի հիւսուածքից մի կտոր, չորա-ցած արիւն և ալին և լետոյ լուանանք՝ հիւսուածքից ներկը իջնում է և մնում են միայն բակտէրիաները. այսպիսով յաջողում է բակտէրիաները մանրադիտակի (միկրոսկօպ) տակ աւելի հեշտութեամբ տեսնել, քան բնական գրութեան մէջ։

Յալտնի հեղանիւթերի մէջ բակտէրիաները մեծա-նում են այն չափով, որ պարզ աչքին էլ երևում են իրեւ պղտոր մի բան։ Պինդ սննդաբար նիւթերի մէջ նոցա աճման շնորհիւ գոյանում են կոլտեր, որոնք բաղ-կացած են միլիարդ միութիւններից։ Բայց պարզ աչքին երևում են միայն ինչպէս կաթիլ, կէտ, կոճակ և կամ քնքոյլ մի շերտ։ Եթէ, օրինակ, եփած և միջից կըտ-րած գետնախնձորը մի քանի ըոպէ օդի մէջ թողնենք և լետոյ ապակէ բաժակով ծածկենք, արդէն 24 ժա-մից լետոյ գետնախնձորի կտրած երեսին բակտէրիանե-րի ալդ տեսակ խումբեր կնկատենք, որոնք գոյացած են օդից թափուած ամեն մի սերմից։ Աճելու ժամանակ բակտէրիաները փոփոխում են

իրանց սննդի տեղի բաղադրութիւնը, հանելով նորանից որոշեալ նիւթեր, որոնք կարևոր են իրանց շենքի համար և այսպիսով առաջ են բերում քիմիական զանագան նոր տեսակ մարմիններ: Սլդպիսով նոցանից գոյանում են շատ տեսակ խմորումներ և փթելու երևոյթներ: Բակտէրիաների մի քանի տեսակներ իրանց սնընդարար տեղից թունաւոր նիւթեր են արտադրում, որոնք նոյն իսկ շատ աննշան քանակութեամբ կորստաբեր ազդեցութիւն ունին մարդկալին մարմնի վերաբ: Ուրիշ բակտէրիաներ իրանք արդէն թունաւոր են: Այսպիսով բակտէրիաների բնութիւնն ու կենցաղավարութիւնը բացատրում են մեզ նոցանից շատերին յատուկ վնասակար ներգործութիւնը մարդուս մարմնի վերաբ: Բակտէրիաների պատճառուած հիւանդութիւնները, այժմեան տեսութեամբ, առաջ են գալիս կամ այնպէս, որ նոքա քայլայում են այն հիւսուածքն, ուր նոքա գտընւում են, կամ արձակում են նոցանից թունաւոր նիւթեր և կամ վերջապէս հենց իրանք են թունաւորում:

Բացի մեր նկարագրած սնկիկներից՝ հիւանդութիւն են առաջ բերում և շատ, այսպէս կոչուած բորբսնեցնող և թթխմորալին սունկեր (գրօյշեալ և ուշենչեալ գրան), վերջապէս մի քանի վարակիչ հիւանդութիւնների պատճառը բացատրում է կենդանական միկրօբների ներգործութեամբ:

Միկրօբների անբաւ քանակութիւնից համեմատաբար շատ քիչ տեսակներն են միայն վնասակար առողջութեան, մարմնի մէջ մշտապէս գտնւում են անհամար քանակութեամբ մտնր կենդանի էակներ, որոնք մասամբ անվնաս բնակիչներ են, մասամբ մինչև անգամ, ինչպէս կարծւում է, նպաստում են մարմնի որոշ գործողութիւններին, ինչպէս օրինակ մարսողութեան: Ուրիշ միկրօբներ անկարող են մարմնի մէջ ապրել, հենց որ նոքա մտնում են մարմնի մէջ կերակրի հետ կամ մի ուրիշ կերպ՝ անմիջապէս ոչնչանում են: Վերջապէս կան և այնպիսի միկրօբներ, որոնք թէպէտ իրանք յատկապէս հիւանդութիւններ չեն առաջ բերում, բայց երբեմն, երբ որ մեծ քանակութեամբ ընկ.

նում են մարմնի գործարանների մէջ կամ ձեռք են բերում արտակարգ լատկութիւններ, կարող են վնասակար ազդեցութիւն ունենալ առողջութեան վերալ: Սոցա վերաբերում են մի քանի փուլմն առաջացնող միկրօբներ և մի քանի բակտէրիաներ, որոնք պատահում են և առողջ աղեքներում:

Վարակիչ հիւանդութիւնների վարակման պայմանները:

Հիւանդութեան սերմերի համար հարկաւոր են լայտնի պայմաններ, որպէս զի կարողանան առաջ բերել իրանց լատուկ՝ ներդործութիւնը. եթէ վարակիչ հիւանդութիւնները լաճախ տեղ-տեղ (Endemie) երեւում են կամ լանկարծակի տարածում (Epidemie), նորից դադարում են և այդ հիւանդութիւններից ազատ են մնում մի քանի տեղեր, այդ բանը միշտ չէ կարելի բացատրել միայն համապատասխան միկրօբների ներկայութեամբ, բացակալութեամբ կամ տեղից տեղ փոխադրուելով: Այն առանձին հանգամանքները, որոնք մեծ մասամբ գեռ ճշտիւ ուսումնասիրուած չեն, որոնք էպիդէմիալի կամ էնդէմիալի ժամանակ նպաստում են հիւանդութեանց սերմերի տարածմանը, նոքա 1, լայտնի ժամանակներ, 2, որոշեալ տեղերում, 3, որոշեալ անհատների կամ բնակիչների խմբերի մէջ, առ այժմ կոչում են 1, ժամանակաւոր, 2, տեղական և 3, անհատական „Dispositio“ (որեգրա-պոլոշութեան):

Ժամանակաւոր դիսպօզիցիան առաջ է գալիս, օրինակ, եղանակի ազդեցութիւնից, ինչպէս՝ չափազանց շոգից, օդի խոնաւութիւնից ևալլն, որոնք հիւանդութեանց սերմերի աճման և զօրութեան (Virulenz) համար ներկայացնում են ժամանակաւոր լատուկ բարելաջող պայմաններ:

Տեղական դիսպօզիցիան. — գտնուում են շատ հիւանդութիւններ, 'ի միջի ալլոց, ճահճների շրջակարգում, հակառողջական կամ խիտ բնակեցրած տներում, վատ խմելու ջրի մէջ և աղբը հեռացնելու վատ սիստէմ ունեցող տեղերում:

Մեծ է վերջապէս Անհատական դիսպօզիցիալ (In-

dividuell) նշանակութիւնը. էպիդէմիալի ժամանակ նկատում է, որ հիւանդութեան վտանգի ենթարկուած քնակիչների միայն չափաւոր մասն են հիւանդանում. և միքանի ընտանիքներ անկասկած աւելի մեծ հակումն են ցոյց տալիս վարակիչ հիւանդութեանց ենթարկուելուն քան թէ միւսները. Տրամադրութիւնը դէպի լայտնի հիւանդութիւնները, օրինակ դէպի թոքախտը, ծնողներից ժառանգաբար անցնում է որդւոց և սոցանից իրանց որդւոց. ուստի և թէպէտ հիւանդութեան ծագման կամ չերևալու դէպրում պատահականութիւնը մեծ գեր է խաղում. և որոշ անձնաւորութիւնների ազատուելը նոցանից, օրինակ բժիշկների ազատուելը խօլերալի և տիֆի էպիդէմիաներին՝ մեծ մասամբ հեշտ բացատրում է նոցա՝ նպատակալարմար պահեցողութեամբ, բայց այնուամենայնիւ պէտք է ընդունել, որ շատ մարդիկ անընդունակ են (Խոտսութէտ) և ոմանք աւելի ընդունակ դէպի մի քանի վարակիչ հիւանդութիւններ:

Անընդունակութիւնը դէպի վարակիչ հիւանդութիւնը կարող է լինել բնածին կամ ստացական – շնորհիւ լայտնի պալմանների, օրինակ՝ յոգնածութեան կամ անբաւարար մննդի, բայց դարձեալ կարող է կորչել. լայտնի է, որ մէկ վարակիչ հիւանդութեամբ, օրինակ ծաղկով, կարմրուկով ևալին, հիւանդացողների մեծ մասը էլ երկրորդ անգամ չեն հիւանդանում միւնոյն հիւանդութեամբ:

Վարակիչ հիւանդութիւնների առաջն առնելու միջոցները:

Վարակիչ հիւանդութիւնների առաջն առնելու ջանքը արդէն գեղեցիկ հետևանքներ էր տուել, երբ իմացան, որ հիւանդութիւն առաջ բերողները՝ միկրօբներն են: Նախկին դարերում վարակիչ հիւանդութիւնները աւելի խիստ աւերմունքներ էին պատճառում, քան այժմ: Ասում են, որ Սև մահը (Ժանտախտ, Schwarze Tod), ժԴ-ըդ դարում ոչնչացրել է 25 միլիոն բնակիչ, այսինքն այն ժամանակուալ Եւրոպալի բոլոր կենդանի ժողովրդի $\frac{1}{4}$ մասը. Միայն ծաղիկը և հարինքը միշտ աւելի մահ են պատճառել, քան թէ այժմ բոլոր վարակիչ հիւանդութիւնները միասին: Այն տեղերը, ուր ա-

ոռղջապահութեան պայմանների վրայ ուշադրութիւն են դարձրել, մանաւանդ վարակիչ ախտերով հիւանդացող-ների թիւը լայտնի կերպով պակասել է:

Պրուսական զօրքերի մէջ 1869 թուին վարակիչ ախտերով հիւանդացան 22,218 զինուոր, բայց այնու-հետև հիւանդութիւնները տարէցտարի այնպէս պակա-սեցին, որ տասը տարուց լետոյ նոցա թիւը միայն 11467 էր. և էլի մի տասնամեակից լետոյ տարեկան միայն 4695, թէպէտ զօրքի թիւը 1870 թուից նշանաւոր կեր-պով աւելացել է: Միւնխէն քաղաքը վաղ շատ անա-ռողջ էր համարում, որովհետև ներկայ գարի վաթսու-նական թուականներին իւրաքանչիւր 100000 հոգուց հարինքով տարեկան մեռնում էին 213 հոգի, 1858 թուին մինչև անգամ 334 հոգի և 1867 թուից մինչև 1875 թուի ընթացքում գեռ էլի 180 հոգի: Ֆօն Պէտ-տէնկօֆէրի խորհրդով որոշեցին քաղաքի առողջական պայմանները բարւոքել: Հոգացին աղբը նպատակալար մար եղանակով հեռացնել, արգիլեցին աներում անա-սուններ մորթելը և ջրանցքի միջոցով խմելու լաւ ջուր բերին աղբիւրներից. այնուհետև հարինքից մեռնելու դէպքերը աստիճանաբար պակասեցին. արգիլ 1876 թուից մինչ 1878 թիւը գեռ միջին թուով մեռնում էին տարեկան 42 մարդ միայն, և 1892 թուին իւրա-քանչիւր 100,000 բնակչից հազիւ միայն 3-ը: Սորա նման յաջողութիւն ունեցան վարակիչ հիւանդութիւն-ների պակասելու վերաբերմամբ այն առողջապահական բարենորոգումները, որոնք մուծուեցան Գերմանիայի ուրիշ շատ քաղաքներում, օր. Բերլինում և Դանցիհում:

Խնչպէս ամեն մարդու մէջ հիւանդութիւններին դիմադրելու ոլժը զօրեղանում է կեանքի կանոնաւոր եղանակով և նպատակայարմար սնունդով, այնպէս էլ ընակութեան տեղերի առողջապահական կազմուածքը և կառավարութիւնը ներգործական մի միջոց է վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքառելու համար: Զնայելով սորան, մենք առանց ուրիշ միջոցների օգնութեան բա-ւականաշափ պաշտպանուած չենք այդ հիւանդութիւն-ների դէմ:

Վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքառելը

1. Վարակիչ հիւանդութիւնների հաղորդակցութեան միջոցով տարածման առաջն առնելը: Թէև հազրդակցութեան միջոցների կատարելագործուելը ճանապարհորդող մարդկանց համար օգտակար եղաւ, բայց աւելյացրեց բոլոր ժողովրդի համար վարակիչ հիւանդութիւնների տարածման վտանգը: Հաղորդակցութեան զարդանալը և այն արագութիւնը, որով ներկայումս ահագին տարածութիւններ են անցնում երկաթուղիով և շոգենաւով, աւելյացնում են հիւանդութիւններ փոխադրելու կարելիութիւնը և արագացնում նոցա մի տեղից միւս տեղ տարածուիլը:

Զանազան եղանակով փորձել են հիւանդութիւնների տարածման այս վտանգին դիմագրել. կամ երկրի սահմանների լարաբերութիւնը բոլորովին կտրեցին այն տեղերից. որոնք բռնուած էին այս տարափոխիկ հիւանդութիւններով, կամ այդպիսի տեղերից եկող մարդիկ պարտաւոր էին առ ժամանակ մնալ, այսպէս կոչուած. կարանտինների մէջ (ուռ քարառեալու մայուց 40 օր), քննելու նոցա առողջական դրութիւնը, ախտահաննելու նոցա հագուստն ու բեռը՝ նախ քան կարող էին սահմանն անցնել: Վերջապէս արգիլեցին ներմուծել այնպիսի ապրանքներ, որոնց միջոցով վախենում էին թէ կարելի էր վարակիչ հիւանդութիւն բերել. կամ այդ ապրանքների ներմուծումը թոյլ էին տալիս ախտահանելուց լեաոյ: Սակայն մեծ մասամբ այս բոլոր միջոցներով չէին հասնում ցանկալի նպատակին:

Հաղորդակցութեան դադարումը եւ կարանտին:

Արտաքին հաղորդակցութեան կատարեալ դադարումը կարելի էր իրագործել հեռաւոր երկրներում և փոքը կղզիներում. ուրիշ ամեն դէպքերում, մանաւանդ ցամաքալին սահմանների վերայ, ինչպէս փորձը ցոյց է տալիս, չնայելով ամենամեծ հսկողութեան, հաղորդակցութեան այդ դադարումը մշտապէս պահպանել անկարելի է լինում: Մինչեւ անգամ լաճախ պատահել է, որ այն պահպանները, որոնք նշանակուած են եղել սահ-

մանները կտրելու համար, հէնց իրանք են օտարական-ներից հիւանդութիւնն ընդունել և տարածել:

Աւելի հեշտ է յաջողում շոգենաւերի մուտքը արգիլելը կամ նոյն իսկ նաւահանգստի մէջ հաղորդակցութիւնը կտրելը ցամաքի հետ մինչև կանցնի զննութեան որոշեալ ժամանակամիջոցը, բայց ալսպիսի ծովալին կարանտիններն էլ սովորաբար յաջողութեամբ չեն հասել սպասած նպատակին, որովհետեւ զննութեան համար նըշանակած ժամանակամիջոցում նաւի վերալ եղած հիւանդութիւնները ծածկել են կամ չեն ճանաչուել և յետոյ առիթ են դառել ապագայ հիւանդութեանց նաւահանգստում:

Իրեղէնների փոխադրութեան դէմ գործ դրած միջոցները, շատ անգամ մի քիչ աւելորդ խստութեամբ են եղել. յալտնի են ալնպիսի դէպքեր, երբ հիւանդութիւնները արդարև իրեղէնների, փոստալին փոխադրութիւնների և այլ միջոցով անց են կացել, բայց այդ եղանակով տարածուած հիւանդութիւնների թիւը քիչ է և լոկ քիչ առարկաներ կան, որոնք ընդունակ են վարակման նիւթը տարածել. մինչև անգամ ցնցոտինների, աղուամազի (բմբուլ) և բրդի ուղարկելը, որոնք անկասկած ընդունակ են մի քանի հիւանդութիւնների սեղմերն ընդունել և տարածել, ըստ մեծի մասին կարելի է թոյլատըելի համարել անվնաս փաթեթներով և ամուր փակուած եղանակով, եթէ միայն հասած տեղը կանխաւ մեծ խնամքով ախտահանուին և ապա գործ ածուին:

2. Վերև նկարագրեցինք, թէ ինչպէս են աշխատում հիւանդութիւնների՝ մի տեղից միւս տեղ և երկրից երկիր տարածելու առաջն առնել, որպէսզի արդարև յաջողութեամբ կուտենք մի տեղ կամ մի երկրում բռնկած հիւանդութեան դէմ, անհրաժեշտ է որ այդպիսի ամեն մի դէպք իւր ժամանակին կառավարութեան յալտնուած լինի. ալնուհետեւ այդ դէպքի վերայ այնպէս պէտք է հսկել, որ առիթ չտալ ուրիշներին էլ հիւանդացներ. Ամենագլխաւոր միջոցները, որոնք գործ են դրում այդ նպատակի համար, սոքտ են. 1, բժիշկ-

ները, հիւանդի ազգականները կամ նոցա փոխարինող ուրիշ անձինք պարտաւոր են յայտնել հիւանդութեան մասին ուր հարկն է. 2, հիւանդին կարևոր դէպքում, եթէ պէտք է և նորա մերձաւորներին, առողջներից առանձնացնելը. 3, հիւանդութեան նիւթերի ոչնչացնելը կամ անվնաս դարձնելը (ախտահանելը, Ջէզինֆեկցիա) հիւանդի արտաթորութեան, նորա սպիտակեղէնի, հագուստի և այն ամեն առարկաների մէջ, որոնց կարող էր կաշել վարակման նիւթը:

Հիւանդութեան նիւթը ոչնչացնելու համար ամենից լաւ է ալրելը, բայց արդպիսի խիստ միջոցի դիմում են միայն այն ժամանակ, երբ ախտահանութիւնը շատ թանկ է նստում առարկայի արժէքի հետ համեմատելով. ախտահանութեան եղանակը պէտք է լինի ազդու, անվնաս այն իրերի համար, որոնց վերալ գործ է դըրում, և անվտանգ այն անձանց համար, որոնց լանձնած է այդ կատարել: Ազգու է ախտահանութիւնը, երբ նա ոչնչացնում է կամ անվաս է դարձնում վարակելու նիւթը. այս նպատակին մեծ մասամբ հաստատ կերպով հստանում են միայն գործին հմուտ անձանց դեկավարութեամբ:

Ախտահանութեան համար գործ են ածում հետևեալ միջոցները.

1. Շոգիով տաքացնելը: Սորա համար գործ են ածում կամ շոգի արտագրող շարժական գործիքներ, որոնք ինչպէս երկաթուղու շոգեմեքենան մէկ տեղից միւս տեղ են տանում և կամ հաստատուն շոգեկաթսաներ առանձին ախտահանիչ կայարաններում: Շոգեմեքենաները, որպէսզի ճիշտ արդիւնքներ առաջ բերեն, պէտք է փորձնուին հմուտ մարդկանց ձեռքով և նոցա վերալ պէտք է բանեն գիտակ անձինք: Շոգին անտարակոյս ոչնչացնում է հիւանդութեան սերմերը, եթէ գործ են ածում լաւ պատրաստուած մեքենաներ՝ ընտիր ծառալողների ձեռքով. և շոգին այն առաւելութիւնն ունի, որ մեծ մասամբ չէ փչացնում առարկաները: Շոգիի տակ անգործածելի են դառնում միայն՝ կաշուէ իրեր, մազեղէնը, ոեղինէ, խէժով կպցրած և լղկած առարկա-

ներ, տախտակի շերտով կարսիներ (ֆաներնեյ), միքա-
նի մետաղէ ապրանքներ և քանի մի տեսակ ուտելիք-
ներ, ուստի և այդ եղանակով չպէտք է ախտահանուեն.
Աւելի նուրբ շորեղէնը շոգու ներգործութիւնից լետոյ
պէտք է ուղղել և հարթել: Արիւնով, թարախով, մար-
մնի արտաթորութիւններով կամ ուրիշ կերպ կեղտոտած
մահուդի և սպիտակեղէնի վերայ մեծ մտսամբ բծեր են
մնում, որոնց հանել չէ կարելի: Այս բոլոր առարկա-
ները որոնք շոդիով են ախտահանուում, շոգիի թանձ-
րանալուց գոյացած ջրից լաւ պահպանել կարելի է փաթ-
թելով, գիցուք, հաստ տիլօի մէջ:

2. Ծուացնելը: Ախտահանելի իրերը դնում են ե-
ռացող ջրի մէջ, որին մի քիչ սօդա են աւելացնում.
սորա գործադրութիւնը հեշտ է և ներգործում է, եթէ
քաւական ժամանակ շարունակուի. բայց շատ իրեղէն-
ների համար անգործածելի է: Այս եղանակը շատ յար-
մար է սպիտակեղէնների, մանր մետաղի իրելի, ամա-
նեղէնի և այլ բաների համար:

3. Քիմիական միջոցների գործածութիւնը:

Ա. Կարբօլթան սապնաջուր: Երեք մասը այն կա-
նաչ կամ սև սապնի, որ կոչում է Sapo calopus և 100
մասը երացրած ջրի լուծուածքի մէջ աւելացնում են 5
մասը զուտ կարբօլթան թթւուտ, ամենից լաւն է 100
պրօցէնտանոց կոչուածը և շարունակ խառնում են: Սպի-
տակեղէնը և ուրիշ՝ այդ միջոցով ախտահանելու յարմար
նիւթերը թրջում են այդ լուծուածքի մէջ, իսկ փալտի
կարսանդէնը, յատակները, սենեկի պատերը, կոշկեղէնն
և ուրիշ կաշուէ իրերը լուանում են գորանով. երբեմն
քաւականանում է նաև սապնաջուրը առանց կարբօլթան
թթւուտի. սորա պատճառած հոտը ախտահանուած ի-
րերից ոչնչացնում են լուանալով կամ քամու տալով:

Բ. Կրաջուր. (պավետկօօ մօլօօ, Kalkmilch). ստ
պատրաստում է մի մասը մանրացրած մաքուր ալրած
կրից և չորս մասը ջրից. այս բանը ամենից լաւ պատ-
րաստում է հետևեալ կերպով. ամանի մէջ առաջ ածում
են միալն ջրի մի փոքր մասը. լետոյ մէջը կիր են լըց-
նում, որ ծծում է ջուրը և փոքր ժամանակից լետոյ փո-

շի է դառնում արտադրելով շոգի և ջերմութիւն. յետոյ խառներով աւելացնում են մնացած ջուրը. այսպէս պատրաստուած ախտահանութեան հեղուկը պէտքէ պահել լաւ ամանի մէջ և գործածելուց առաջ խառնել. Գործածելիս պէտք է զգուշանալ որ աչքերին կաթիլներ չդիպչեն, որովհետև կրաջուրը խիստ և աչքերը ուտող ջուր է:

Կրաջուրը գլխաւորապէս պէտքական է հիւանդի արտաթորութիւնների համար. եթէ սոցա հետ մօտաւորապէս հաւասար չափով խառնուկ՝ սովորաբար կարճ ժամանակում սպանում է նոցա մէջ եղած հիւանդութեանց սերմերը (միքրօօրգանիզմ): Օգտակար կերպով գործ է դրւում նաև հիւանդի սենեակը ախտահանելու համար, սրսկելով կամքսելով պատերին և լատակներին, որ մի քանի ժամանակից լեռոյ դարձեալ լուանում են:

4. Թափտալը, խոզանակով (պետք) սրբելը, քամու տալը և արեւի տակ փոխելը:

Այս միջոցներով ախտահանում են շոգեմեքենայ չունեցած գէպքում այն իրերը, որոնք եփելով կամ խոնաւութիւնից անգործադրելի են դառնում և որոնք շոգիով ախտահանութեան չեն դիմանում, օրինակ փափուկ կարսին, Այս միջոցը կարող է բաւարար լինել մի քանի հիւանդութիւնների սերմերը հեռացնելու համար, բայց մեծ մասամբ հաստատ չէ ներգործում: -

5. Ուրիշ միջոցներ: Ախտահանութեան համար ուրիշ մի քանի միջոցներ ել կարելի է գործ դնել՝ հանգամանքներին նայելով. այսպէս քիմիական միջոցների մի շարք, օրինակ՝ սուլէլմա, ծոթրին (Tymol, տիմոլ), կրածնի քլորոռուկ (Chloralkali, ճնշուառայ известъ), անագի քլոռուկ (Chlorzink, խլորիստն ցинкъ), երբեմն օգտակար ախտահանիչ միջոցներ են. նոցանից մի քանիսը հիւանդութեան նիւթերը լաւ են ոչնչացնում ձեռքերից և մարմնի ուրիշ տեղերից. բայց ալդախի գէպքերում ալդ տեղերը պէտքէ ախտահանութիւնից առաջ սապնով ու խոզանակի օգնութեամբ խնամքով լուանալ: Մարմինը ամենից նպատակալարմար կերպով ախտահանում են լիքը վաննալով առատ սապնի գործածութեամբ: Պաս-

տառից (օбоն) վարակիչ նիւթերը հեռացնում են հացի փշրանքով սրբելով, որոնց, գործածելուց յետով, ալրում են. կամ թէ պաստառը բոլորովին պոկում են և պատը կրաջրով մաքրում: Յատակի ճեղքում սրսկում են ախտահանիչ հեղուկով. երբեմն հարկաւոր է լինում յատակի տակ գտնուած բոլոր հողը գուրս հանել:

Տարաբաղտաբար միքանի ամեննեին չներգործող ախտահանիչ միջոցներ դեռ էլի շատ են տարածուած. սացա վերաբերում են երկաթէ կամ պղնձէ ծծմբաթթւուտի լուծուածքը կամ ծծմբի շոգին: Մեծ մասամբ ցանկալի նպատակին չէ կարելի հասնել նաև քլոռի գազով ծխոտելով և ջրախառն կարբօլեան թթւուտ սրսկելով, որով հետև ալդ դէպքում ախտահանիչ միջոցներ բաւարար քանակութեամբ չեն ազգում:

Ախտահանութեան եղանակը, ընդարձակութիւնը և տեւողութիւնը ամեն մի դէպքում պէտք է որոշէ հմուտ անձը, աւելի լաւ է քժիշկը, և նոյն իսկ ախտահանութիւնը շատ նպատակայարմար կլինի յանձնել քժշկի խնամքին, եթէ չի կարելի առանձին ախտահանիչ հիմնարկութեան դիմել: Այս տեսակ հիմնարկութիւններ գտնուում են Եւրոպակի փոքր ի շատէ մեծ քաղաքներից շատերում և տեղ տեղ էլ գաւառներում: Ալդ հիմնարկութիւնները իրանց պաշտօնեաններին պահանջուած միջոցներով ուղարկում են հիւանդի տունը, որպէս զի տեղն ու տեղը ախտահանէ ընակարանը և նորա մէջ գտնուած անշարժ առարկաները: Պինդ փակուած կառքերում տանում են իրանց հետ հիւանդի սենեակում գտնուած շորերը, անկողինը, կտրասին, գործածելի իրեղէնները և ուրիշ շարժական առարկաներ և ախտահանելով մօտ 24 ժամից յետոյ վերագարձնում:

Ախտահանութիւնը յաճախ չափազանցութեան են հասցնում մանաւանդ էպիզէմիալի (համտճարակի) ժամանակ. ալդպիսի հեղուկներով սրսկում են ճանապարհորդներին ու նոցա ծանրոցը, ողողում են փողոցները և զանազան առարկաներ, որոնցից ամեննեին չէ կարելի ենթադրել, որ նոքա պարունակելիս լինեն իրանց մէջ հիւանդութեան սերմեր: Բացի ալն, որ ախտահան վար-

մունքը բոլորովին աւելորդ ծանրաբեռնութիւն է և անչափ վատնում է ախտահանիչ նիւթերը, ունի և այն գլխաւոր վնասը, որ բնակիչների մէջ սխալ կարծիք է տարածում, իբր թէ ալդպիսով նա պաշտպանում է հիւանդութիւնից: Ալդպիսով շատ հեշտ է պատահում, որ հիւանդութեան տարածման առաջն առնելու համար չեն իրագործում հաստատ ներգործող միջոցները և լուսալով ախտահանիչ միջոցների ներգործութեան վերալ չեն հոգում մաքրութեան վերալ, որ ամեն մի դէպքում աւելի օգտակար է քան թէ վատ ախտահանութիւնը:

Վարակիչ հիւանդութիւնների ընթացք:

Տարափախիկ հիւանդութեան դէմ մաքառելու ամենակարևոր պայմանն այն է, որ հիւանդութիւնը իրաքանչիւր դէպքում ժամանակին որոշուի, ուստի և անհրաժեշտ է գիտենալ այն ճանապարհները, որոնցով նա տարածում է և այն եղանակը, որով նա ներս է մըտնում մարդկալին կազմուածքի մէջ: Թէև տարափախիկ հիւանդութիւնները այս տեսակէտից շատ տարբեր են միմեանցից, այնուամենայնիւ նոքա շատ նման են միմեանց իրանց ծագման, արտաքին նշանների (СИМПТОМЫ) և ընթացքի կողմից:

Հիւանդութեան սերմերը մտնում են մարդկալին կազմուածքի մէջ՝ մարմնի մեծ բացուածքների միջով, մանաւոնդ շնչառութեան և մարսողութեան գործարանների մուտքերով (քիթ, բերան) կամ վէրքերով, լաճախ մորթու հաղիւ նշանակալի քերուածքով, երեմն և մորթու ծակոտիներով: Նատ սերմեր իրանց ներգործութիւնն սկսում են իսկոյն այն տեղից, ուր նոքա մտնում են կամ գոնէ այն գործարանների մէջ, ուր նոքա նախապէս հասել են, միւսները մտնում են աւշալին (Лимфатические сосуды) և արեան անօթները, որպէս զի կամ ալդ տեղ բազմանան և կամ շնչառութեամբ բռւն գնեն մարմնի ուրիշ մասերում: Սերմերի մտնելուց յետու իւրաքանչիւր դէպքում նոցա ամելու և թունաւոր նիւթեր կազմակերպելու համար անցնում է մի որոշ ժամանակ, երբ հիւանդութեամբ բռնուած (Инфициро-

վառնայ) անձը ըստ երևութին դեռ առողջ է թւում։ Այս ժամանակը անուանւում է հիւանդութեան ծածկուած (սիցուացիա-լոկաբատիոն) զրջան։ Այս ժամանակամիջոցի վերջերում, որը ամեն մի վարակիչ հիւանդութեան համար զանազան տեսողութիւն ունի, առաջ երեւում են իսկական հիւանդութեան յառաջընթաց նշաններ, որոնք են՝ լոգնածութիւն, ախորժակի պակասութիւն, ընդհանուր հիւանդային զգացումներ, անհանգըստութիւն և այլն. սորանից լետոյ հիւանդութիւնը երեան է գալիս երբեմն փսխելով կամ փոքր մրսելով, որ կարող է սաստկանալ մինչև ատամների սարսուռը։

Զերմ:

Նատ տարափոխիկ հիւանդութիւնների հետ անբաժան է առողջութեան այն խանգարումը, որ ջներմ է կոչւում։ Նա մարմնի հիւթերի զօրեղացրած փոխարինութեան (Stoffumsatz) արտաքին արտայալտութիւնն է, այսինքն սաստկացրած այրում (Oxydation) մարմնի հիւսուածքներում և շատ դէպքերում նա ծառարում է որպէս բնութեան մի հնարք մաքառելու մարմնի մէջ մըտած սերմերի դէմ և նոցա թունաւոր նիւթերը ոչընչացնելու։ Զերմի աչքի ընկնող նշանը մարմնի տաքութեան աւելանալն է։ բարեխառնութեան բարձրանալը մինչև 8եւլի 39,5, չափաւոր զերմ է, իսկ նորանից աւելին՝ մեծ տաքութիւն է։ Զերմի ժամանակ զնչառութիւնն արագանում է և սրտի սաստկացրած գործունէութեան համեմատ՝ աւելանում է զարկերակի զարկերի (պուլչե) թիւը։ Տաքութիւն ունեցող հիւանդը ծարաւ է զգում իրան, երբեմն քրտնում է և արտաթորում քիչ քանակութեամբ, բայց մոլոր կարմիր և լաճախ դիրտ (օսածօբ) պարունակող մէզք. գլուխը ցաւում է, պտտում ու ծանրանում. քունը անհանդիսաւ է և խանգարում է երազներով, երբեմն հիւանդը տաքութեան մէջ խօսում է—դէլն է տալիս, ձեռներն անորոշ դէս ու դէն է տանում և աշխատում է անկողնից փախչել. եթէ այս դրութեան մէջ նորան լաւ չեն հսկում երկիւղ կայ՝ որ նա իրան կվնասէ անկողնից վալը ընկնելով կամ մինչև անդամ լուսամտից վալը թռչելով և ալին։

Տարափոխիկ հիւանդութիւններից մի քանիսի ժամանակ զերմը մի քանի շաբաթ գրեթէ միատեսակ բարձրութեամբ է շարունակւում. մի քանիսի ժամանակ տաքութիւնը առաւօտներն իջնում է կանոնաւոր կերպով մէկ աստիճան կամ աւելի, իսկ երեկոյեան դարձեալ բարձրանում. վերջապէս կան այնպիսի տարափոխիկ հիւանդութիւններ, որոնց ժամանակ տաքութիւնը բոլորովին անցնում է մի քանի ժամկց կամ մի քանի օրէց յետով, տաքութեան աւելանալն ու պակասելը երբեմն աստիճանաբար է լինում, երբեմն արագ. Երբ տաքութիւնը իջնելիս միւնոյն ժամանակ քրտինք և կաղդուրիչ քուն է գալիս՝ կոչւում է հիւանդութեան ճգնաժամ (Կրիզում):

Վարակիչ հիւանդութիւնների հետևանքը լինում է կամ առողջանալը և կամ մարմնի մի քանի գործարանների խանդարմունքը, երկարատև ուժաթափութիւն, մնալիւն թերութիւն և կամ մահ:

Գներմ. Թարգ. բժշկ. Ս. ՄԱՅՍՈՒՐԻՔԱՆՑ.

